Արձանագրություն N 2

«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/2» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի արտահերթ նիստի

ք. Երևան

12.12.2019թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Խաչիկյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Առուշանյանը, Գ. Մեհրաբյանը, Հ. Ռամազյանը, Ա. Գևորգյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ներսիսյան

1. **«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/2» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 10.12.2019 թվականին ներկայացված պարզաբանումներին պատասխանելու վերաբերյալ**

(Ա. Խաչիկյան)

Պարզաբանման պահանջի տեքստ հ 1.

Ձեր կողմից հայտարարված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/2» ծածկագրով մրցույթին մասնակցություն ունենալու համար խնդրում եմ ներկայացնել հետևյալ պարզաբանումները.

1. Խնդրում եմ նշել հաղթող ճանաչվող ընկերության հետ պայմանագրի կնքման ժամկետը (մրցույթի բացման օրը սույն թվականի դեկտեմբերի 16-ն է),

2. Պայմանագրի (համաձայնագրի) կնքման օրվանից սկսած որքան ժամանակ է նախատեսվում տրամադրել տեխնիկաների մատակարարման համար, քանի որ իրականում տվյալ տեխնիկաների արտադրության և մատակարարման համար պետք է տրամադրվի (պայմանագրի (համաձայնագրի) կնքման պահից սկսած) 3-4 ամիս:

Այսպիսով մեր ընկերությունը տվյալ տեխնիկաները կարող է մատակարարել պայմանագրի կնքումից հետո մինչև 4 ամիս ժամանակահատվածում: Ձեր կողմից ընդունելի կլի՞նի այդ ժամանակահատվածը:

Պարզաբանում տրամադրելու տեքստ.

1-ին հարցի վերաբերյալ հայտնում ենք, որ ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն, որն իրենից ենթադրում է տվյալ ընթացակարգի ընթացքից ելնելով որոշակի գործողությունների կատարում և պահպանում: Նախօրոք հնարավոր չէ կանխատեսել պայմանագրի կնքման հստակ օրը:

Իսկ ինչ վերաբերում է 2-րդ հարցին՝ մատակարարման ժամկետը մինչև 4 ամիս սահմանելուն, ապա հայտնում ենք, որ տվյալ ընթացակարգի հրավերի գնման ժամանակացույցով «ավլող, մաքրող, փոշեկուլ կոմունալ ճանապարհային մեքենաների» համար սահմանված է հստակ ժամկետ «պայմանագիրն (համաձայնագիրն) ուժի մեջ մտնելու օրվանից

21 օրացուցային օր» և այդ ժամկետները վերանայման ենթակա չեն՝ ելնելով ապրանքի օգտագործման նշանակությունից:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Ա. Խաչիկյան
Անդամներ՝		Վ. Առուշանյան
		Գ. Մեհրաբյան
		Հ. Ռամազյան
		Ա. Գևորգյան
Քարտուղար՝		Ա. Ներսիսյան